ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

4001, ք. Իջևան, Իջևանյան փող. ☎ (010) 311-301

N 67/4947-25

«08» 10 2025թ.

Իջևան համայնքի ավագանուն

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՅՑ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Դատախազի կողմից պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելն ընդգրկում է՝

(...)

2) վարչական դատավարության կարգով պետության (համայնքի) գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցի հարուցումը. (...)»:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

«Դատախազը պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցում է հետևյալ բացառիկ դեպքերում, երբ՝

1) իր լիազորություններն իրականացնելիս հայտնաբերում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը, որին վերապահված է պետական (համայնքային) շահերի պաշտպանությանն առնչվող տվյալ հարցերով հայց ներկայացնելը, իրազեկ լինելով պետական (համայնքային) շահերի խախտման փաստի մասին, դատախազի կողմից հայց ներկայացնելու առաջարկություն ստանալուց հետո ողջամիտ ժամկետում հայց չի ներկայացրել:»

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Համայնքի ավագանին սույն օրենքով սահմանված կարգով

(...)

10) դատական կարգով կարող է վիճարկել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, օրենքներին և համայնքի ավագանու որոշումներին հակասող՝ համայնքի ղեկավարի որոշումները.»:

ՀՀ Վճռաբեկ դատարանն իր 2024 թվականի մայիսի 10-ի թիվ ՎԴ2/0250/05/23 որոշմամբ անդրադառնալով համայնքային շահերի հայց հարուցելու լիազորության իրականացմանը՝ նշել է հետևյալը.

«(...) երբ դատախազը իր լիազորություններն իրականացնելիս հայտնաբերել է համայնքի ղեկավարի կողմից համայնքային շահերի խախտման փաստ, պարտավոր է

հայց ներկայացնելու առաջարկությամբ դիմել համայնքի ավագանուն, քանի որ վերջինիս է վերապահված համայնքային շահերի պաշտպանությանն առնչվող տվյալ հարցերով հայց ներկայացնելու առաջնային իրավասությունը: Եթե դատախազի կողմից հայց ներկայացնելու առաջարկություն ստանալուց հետո համայնքի ավագանին ողջամիտ ժամկետում հայց չի ներկայացրել դատարան, ապա միայն այդ պայմաններում է դատախազությունը ձեռք բերում համայնքային շահերի պաշտպանության հայց ներկայացնելու իրավունք:»:

ՀՀ Վճռաբեկ դատարանն իր նույն որոշմամբ, անդրադառնալով որևէ այլ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից դատախազության առաջարկի հիման վրա վարչական դատավարության կարգով պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելու ժամկետներին, նշել է.

«(...) մի շարք դեպքերում օրենսդիրը պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելու առաջնային լիազորությունը վերապահել է այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնին, որի իրավասությունների ոլորտում պետությանը (համայնքին) պատճառվել է գույքային վնաս:

Ուստի այն դեպքում, երբ պետական (համայնքային) շահերի պաշտպանությանն առնչվող տվյալ հարցով հայց ներկայացնելը վերապահված է որևէ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի, դատախազը, նախ պետք է պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց ներկայացնելու առաջարկություն կատարի համապատասխան պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնին:

(...) Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատախազի ներկայացրած առաջարկությունը ստանալուց հետո պետական շահերի պաշտպանությանն առնչվող համապատասխան հայցով դատարան դիմելու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի իրավասությունը սահմանափակված է ողջամիտ ժամկետով, որը տվյալ պարագայում Վճռաբեկ դատարանի գնահատմամբ պետք է հաշվարկվի համապատասխան հայցատեսակի դեպքում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված ժամկետներով:

Ընդ որում, տվյալ ժամկետի հաշվարկման ելակետը պետք է պայմանավորել դատախազի կողմից ներկայացված առաջարկությունը ստանալու պահով:

Այլ կերպ ասած՝ եթե պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը ստացել է դատախազի առաջարկությունը՝ պետական շահերի պաշտպանությանն առնչվող հարցով դատարան դիմելու վերաբերյալ, ապա տվյալ մարմինը առաջարկությունը ստանալուց հետո ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով հայց ներկայացնելու ժամկետների պահպանմամբ պետք է դիմի ՀՀ վարչական դատարան, որպիսի ժամկետներում ներկայացված հայցը կհամարվի ողջամիտ ժամկետում ներկայացված:

Այսինքն՝ համայնքի ղեկավարի վարչական ակտի, գործողության կամ անգործության կապակցությամբ դատախազը իրավասու է համայնքային շահերի պաշտպանության հայց հարուցել միայն այն պայմաններում, երբ վերջինս հայց ներկայացնելու առաջարկություն է ներկայացրել համայնքի ավագանուն, իսկ համայնքի ավագանին ողջամիտ ժամկետում հայց չի ներկայացրել, այլ կերպ ասած՝ դրսևորել է անգործություն, որպիսի պայմաններում կարելի է փաստել օրենքով նախատեսված բացառիկ դեպքի և ըստ այդմ՝ պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց ներկայացնելու լիազորությունը իրացնելու համար անհրաժեշտ նախապայմանների առկայության մասին»:

Պետության գույքային շահերի արդյունավետ պաշտպանությունն ապահովելու և պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելու

լիազորությունների շրջանակում իրականացված ուսումնասիրության ընթացքում պարզվել է, որ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության Տավուշի ստորաբաժանման իրավասու պաշտոնատար անձը, օրենսդրական պահանջների խախտմամբ՝ աճուրդի միջոցով օտարել է Իջևան քաղաք, Մելիքբեկյան փողոց 5/9 հասցեում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող գույքը:

Մասնավորապես՝

24.12.2001 թվականի Իջևանի ավագանու թիվ 13 որոշման համաձայն՝ ավագանին որոշել է 2001 թվականի լրավճարային գումարի մնացորդի հաշվին նպատակահարմար է կատարել հաշվանցումներ՝ հիմնարկ ձեռնարկությունների հետ հարկային պարտավորությունների դիմաց, ուստի հավանություն է տվել 2001 թվականի լրավճարային գումարի մնացորդի հաշվին հիմնարկ ձեռնարկությունների հետ հարկային պարտավորությունների դիմաց կատարել հաշվանցում՝ Իջևանի շրջկոոպին փոխանցելով 7.932.500 ՀՀ դրամ:

26.12.2001 թվականի Իջևանի տարածքային սպառկոոպի վարչության թիվ 10 արձանագրության քաղվածքի համաձայն որոշվել է վարչության սեփականությունը հանդիսացող ք. Իջևան, Ս.Մելիքբեկյան 5/9 հասցեում գտնվող կերպարվեստի 272.7քմ մակերեսով տարածքը և ք. Իջևան, Ս.Մելիքբեկյան 5/10 հասցեում գտնվող պարարվեստի 293.9քմ մակերեսով տարածքը օտարել Իջևան համայնքին՝ համապատասխանաբար 3.817.863 և 4.114.668 ՀՀ դրամով, որի գումարները փոխանցվել է սպառկոոպի հաշվարկային հաշվին:

24.12.2001 թվականի Իջևանի ավագանու թիվ 13 որոշման հիման վրա՝ Իջևանի քաղաքապետի 29.12.2001 թվականի՝ «Իջևանի տարածքային սպառկոոպից տարածքներ ձեռք բերելու վերաբերյալ» թիվ 52 որոշման համաձայն՝ 2001 թվականի լրավճարային գումարի մնացորդի հաշվին Իջևանի սպառկոոպից **7.932.500 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով որոշվել է ձեռք բերել Ա.Մելիքբեկյան 5/9 և 5/10 հասցեում գտնվող 272.7 և 293.9քմ տարածքները:**

03.11.2002 թվականի Իջևանի տարածքային սպառկոոպի վարչության որոշման համաձայն՝ նպատակահարմարությունից ելնելով և լիազորների 1999 թվականի թիվ 1 որոշմամբ որոշվել է նախկին գաստրոնոմ ռայմագը և գրախանութի տարածքը բաժանել 11 միավորների և ներկայացնել Կադաստրի կոմիտեին՝ ձևակերպման համար:

04.07.2003 թվականին Իջևանի տարածքային սպառկոոպի տնօրեն Ս. Ադամյանը դիմում է ներկայացրել ՀՀ Կադաստրի կոմիտեին՝ ի թիվս այլնի Մելիքբեկյան 5/9 միավորի նկատմամբ Իջևան Սպառկոոպի սեփականության իրավունքը գրանցելու նպատակով:

15.07.2003 թվականին Մելիքբեկյան 5/9 հասցեում գտնվող 11-001 կադաստրային ծածկագրով 272.7քմ հասարակական նշանակության տարածքի նկատմամբ կատարվել է Իջևանի տարածքային սպառկոոպի սեփականության իրավունքի գրանցում, հիմք՝ Աշխ դեպ Իջևանի շրջսովետի գործկոմի 11.06.1951թ արձանագրություն 20, Իջևանի տարածքային սպառկոոպի 03.11.2002 թվականի որոշում /վկայական թիվ 1756491/:

13.10.2003 թվականին Իջևանի տարածքային սպառկոոպ վարչության նախագահ Սուրեն Ադամյանի և Իջևան Համայնքի՝ ի դեմս ղեկավար Վ. Ներսիսյանի և լիազորված անձ Է.Քամալյանի միջև կնքված անշարժ գույքի առքուվաճառքի թիվ 1201 պայմանագրի համաձայն՝ Համայնքը 4.114.668 ՀՀ դրամով ձեռք է բերել Մելիքբեկյան 5/9 հասցեի 272.7 քմ անշարժ գույքը:

13.10.2003 թվականին Իջևանի տարածքային սպառկոոպ վարչության նախագահ Սուրեն Ադամյանի և Իջևան Համայնքի՝ ի դեմս ղեկավար Վ. Ներսիսյանի և լիազորված անձ Է.Քամալյանի միջև կնքված անշարժ գույքի առքուվաճառքի թիվ 1202

պայմանագրի համաձայն՝ Համայնքը 3.817.863 ՀՀ դրամով ձեռք է բերել Մելիքբեկյան 5/9 հասցեի 272.7 քմ անշարժ գույքը:

31.10.2003 թվականի անշարժ գույքի առքուվաճառքի թիվ 1202 պայմանագրի հիման վրա Մելիքբեկյան 5/9 հասցեի 272.7 քմ հասարակական նշանակության անշարժ գույքի նկատմամբ գրանցվել է Իջևան համայնքի սեփականության իրավունքը: /վկայական թիվ 1600998/

ՀՀ Տնտեսական դատարանի թիվ S3-203 գործով 2002 թվականի սեպտեմբերի 18-ի կայացված վճռով /օրինական ուժի մեջ է մտել հոկտեմբերի 3/՝ 2002 թվականի հոկտեմբերի 15-ին տրվել է կատարողական թերթ, ըստ որի՝ **բավարարվել է ՀՀ սոցիալական ապահովության պետհիմնադրամ Իջևանի տարածքային կենտրոնի հայցն ընդդեմ «Իջևանի բնակարանային տնտեսություն» ՓԲԸ-ի՝ 1.933.500 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին**/*կապ թերթի ժամկետ 2003թ հոկտեմբեր 15/:*

Տավուշի մարզի ԴԱՀԿ ծառայության կողմից «Իջևան բնակտնտեսություն» ՓԲԸ /Իջևանի քաղաքապետարան/[1] պարտավորությունների դիմաց կազմակերպված աճուրդի արդյունքում, ըստ 18.11.2003 թվականի գույքը աճուրդով վաճառելու մասին թիվ 01-11 արձանագրության, Մելիքբեկյան 5/9 հասցեում գտնվող 272.2 քմ ոչ բնակելի անշարժ գույքի աճուրդի հաղթող է ճանաչվել Վալերի Նարիմանի Մելիքբեկյանը՝ 1.850.000 ՀՀ դրամով:

05.12.2003 թվականին ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության Տավուշի ստորաբաժանման պետ Էդվարդ Մարգարյանի՝ ի դեմս լիազորված անձ Գրիշա Գրիգորյանի և Վալերի Մելիքբեկյանի միջև կնքվել է անշարժ գույքի առքուվաճառքի թիվ 1379 պայմանագիրը, որով վերջինս կայացած աճուրդի արդյունքների հիման վրա 1.800.000 ՀՀ դրամով ձեռք է բերել Մելիքբեկյան 5/9 հասցեում գտնվող 272.7 քմ ոչ բնակելի շինությունը:

Արդյունքում՝ 30.12.2003 թվականին անշարժ գույքի առքուվաճառքի թիվ 1379 պայմանագրի հիման վրա ք. Իջևան, Մելիքբեկյան 5/9 հասցեում գտնվող 272.7 քմ հասարակական նշանակության շինության նկատմամբ գրանցվել է Վալերի Նարիմանի Մելիքբեկյանի սեփականության իրավունքը: /վկայական թիվ 1601069/

Իրավահարաբերության ծագման պահին գործող Դատական ակտերի հարկադիր կատարման մասին ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի համաձայն՝

1. Պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելը ներառում է գույքի վրա արգելանք դնելը, այն առգրավելը և հարկադիր իրացնելը (աճուրդ կամ ուղղակի վաճառք):

2. Պարտապանի գույքի վրա բռնագանձումը տարածվում է այն չափով, որն անհրաժեշտ է կատարողական թերթի պահանջների կատարման համար, ներառյալ՝ կատարման ծախսերը:

3. Կատարողական թերթով բռնագանձումն առաջին հերթին տարածվում է պարտապանի դրամական միջոցների վրա:

Եթե պահանջատիրոջ պահանջները բավարարելու համար չկան անհրաժեշտ դրամական միջոցներ, ապա բռնագանձումը տարածվում է պարտապանին պատկանող այլ գույքի վրա, բացառությամբ այն գույքի, որի վրա օրենքով չի թույլատրվում բռնագանձում տարածել:

4. Պարտապանի գույքի վրա բռնագանձումը տարածվում է հետևյալ հերթականությամբ.

1) պարտապան իրավաբանական անձի պարագայում՝

---

[1] «Իջևան բնակտնտեսություն» ՓԲԸ-ն լուծարվել է Իջևան համայնքի ավագանու 25.07.2011թ. թիվ 15 որոշմամբ

ա) արտադրության մեջ անմիջականորեն չներգրավված հիմնական միջոցներ,

բ) պատրաստի արտադրանք,

գ) անավարտ արտադրանք, այդ թվում՝ հումք, նյութեր, կիսաֆաբրիկատներ,

դ) այլ գույք (այդ թվում՝ անշարժ գույք).

(...)

Յուրաքանչյուր հաջորդ հերթի գույքի վրա բռնագանձումը տարածվում է միայն նախորդ հերթի գույքի վրա բռնագանձումը տարածելուց հետո: Առանց նախորդ հերթում ընդգրկված գույքի բռնագանձումը իրականացնելու՝ հաջորդ հերթի գույքը կարող է բռնագանձվել, եթե ակնհայտ է, որ նախորդ հերթի գույքի արժեքը անբավարար է պահանջների բավարարման համար:

Եթե միևնույն հերթում առկա են գույքի տարբեր տեսակներ, ապա դրանց վրա բռնագանձում տարածելու հերթականությունը որոշում է հարկադիր կատարողը:

2003 թվականի հոկտեմբերի 8-ին ընդունված և իրավահարաբերության ծագման պահին գործող Հրապարակային սակարկությունների մասին ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝

1. Հարկադիր է ճանաչվում այն աճուրդը, որն անցկացվում է կատարողական թերթին համապատասխան:

2. Հարկադիր աճուրդի լոտ կարող է դառնալ <u>ցանկացած շարժական կամ անշարժ գույք, այդ թվում՝ գույքային իրավունքներ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:</u>

3. Հարկադիր աճուրդը կազմակերպում և անցկացնում է հարկադիր կատարողը:

(...)

2001 թվականի սեպտեմբերի 25-ին ընդունված և իրավահարաբերության ծագման պահին գործող ինկորպորացիայով Բաժնետիրական ընկերությունների մասին ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝

1. Բաժնետիրական ընկերություն (այսուհետ՝ Ընկերություն) է համարվում առևտրային կազմակերպություն հանդիսացող այն տնտեսական ընկերությունը, որի կանոնադրական կապիտալը բաժանված է Ընկերության նկատմամբ բաժնետերերի պարտավորական իրավունքը հավաստիացնող որոշակի թվով բաժնետոմսերի:

2. Ընկերությունն իրավաբանական անձ է և ունի իր բաժնետերերի գույքից առանձնացված գույք, որը հաշվառվում է ինքնուրույն հաշվեկշռում:

Ընկերությունն իրավունք ունի իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

Նույն օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝

1. Ընկերությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով:

(...)

3. Ընկերության բաժնետերերը պատասխանատվություն չեն կրում նրա պարտավորությունների համար և իրենց պատկանող բաժնետոմսերի արժեքի սահմաններում կրում են Ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը:

(...)

5. <u>Հայաստանի Հանրապետությունը և համայնքները պատասխանատվություն չեն կրում Ընկերության պարտավորությունների համար: Ընկերությունն իր հերթին պատասխանատվություն չի կրում Հայաստանի Հանրապետության և համայնքների պարտավորությունների համար:</u>

Վերոգրյալ նորմերից հետևում է, որ պահանջատիրոջ գույքի վրա բռնագանձում տարածելը ներառում է գույքի հարկադիր իրացնումն այն չափով, որն անհրաժեշտ է կատարողական թերթի պահանջների կատարման համար և բռնագանձումն առաջին հերթին տարածվում է պարտապանի դրամական միջոցների վրա, իսկ այն դեպքում, երբ չկան անհրաժեշտ դրամական միջոցներ, ապա բռնագանձումը տարածվում է պարտապանին պատկանող այլ գույքի վրա, բացառությամբ այն գույքի, որի վրա օրենքով չի թույլատրվում բռնագանձում տարածել: Հարկադիր աճուրդի լոտ կարող է դառնալ ցանկացած շարժական կամ անշարժ գույք, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Միևնույն ժամանակ վերը նշված օրենսդրական նորմերով սահմանվում է, որ Հայաստանի Հանրապետությունը և համայնքները պատասխանատվություն չեն կրում Ընկերության պարտավորությունների համար: Ընդ որում օրենսդիրն այս կանոնի համար բացառություններ չի նախատեսել, այսինքն՝ անկախ այն հանգամանքից, թե բաժնետիրական ընկերությունը գտնվում է պետական հիմնարկի կամ համայնքի կազմում, թե՝ ոչ, համայնքը պատասխանատվություն չի կարող կրել Ընկերության ունեցած պարտավորությունների, այդ թվում՝ դատական ակտով վերջինիս վրա դրված պարտավորությունների համար:

Հիմք ընդունելով վերոգրյալ նորմերը և դրանք համադրելով սույն գործի փվյալների հետ՝ հարկ եմ համարում նշել, որ փվյալ դեպքում Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը կատարողական վարույթով պարտապան «Իջևան բնակտնտեսություն» ՓԲԸ ունեցած պարտավորությունների կատարման համար իրավասու չէր բռնագանձում տարածելու և ըստ այդմ հարկադիր աճուրդով իրացնել սեփականության իրավունքով Իջևան համայնքին պատկանող Տավուշի մարզ, ք. Իջևան, Մելիքբեկյան փողոց Մելիքբեկյան 5/9 հասցեում գտնվող 272.7 քմ հասարակական նշանակության շինության նկատմամբ:

Վերոգրյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի համադրված վերլուծությունից հետևում է, որ վերոհիշյալ որոշմամբ խախտվել են պետության (համայնքի) շահերը, ուստի՝ առաջարկում եմ սույն առաջարկությունը ստանալու պահից 10 օրյա ժամկետում պետության (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցել իրավասու դատարան և հարուցված հայցի մասին նույն օրը հայտնել ՀՀ դատախազության Տավուշի մարզի դատախազություն, իսկ հայց չհարուցելու պարագայում նույն ժամկետում այդ մասին տեղեկացնել ՀՀ դատախազության Տավուշի մարզի դատախազությանը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ նշված ժամկետում հարուցված հայցի մասին տեղեկատվության բացակայության դեպքում դատախազությունը ձեռնամուխ կլինի «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի հիմքով հայց հարուցելու լիազորության իրացմանը:

Հարգանքով՝

Մարզի դատախազի տեղակալ,
առաջին դասի խորհրդական՝ **Հ.Աղասարյան**